



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

234

LG7
1048

1999

43759-4.2.

13

ՅԵՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ


ՊԱՐԱՊՈՒԹԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՐԻԱՐԳԱԿԱՆ

ՍԹՈՌՈՅՆ ԿԻՒԼԻԿԻՈՅ

ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

2090



28200-62

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍԻ ՔԻՐԻՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

— 1871 —

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՂՊՃԵԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԱՍԻՈՅ
ՅԱԿՈՒ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՆՏԻՍՏԵԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ԲԱՐՍԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻՊՐՈՍԻ
ՍՈՒԲԻԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՋԱՆՃԵԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆՏԻՈՒԲԱՅ

Կրօնիկոն կաթողիկոսութեան և Կ. Պօլսոյ նախագահութեան բաժանմունք-
քովը մէկտեղ, որ մտեր է կաթողիկէ Հայոց Եկեղեցւոյն մէջ, դիմամարտ խորհրդ-
քով միութեան միտում մըն ալ ամենուն սիրտը գրաւած ունէր. կաթողիկոսական
Աթոռը իր նախնական տարածութիւնը յիշելով՝ ուսկից յանդիման զրկուած
կը համարէր զինքը, բաժանեալ մասը նորէն իր ծոցը ամբողջել կը ջանար, և ընդ-
հակառակն Կ. Պօլսոյ աթոռը որ իբրեւ մասն Արեւմտեան պատրիարքութեան հաս-
տատուիլ կ'ուզէր, նոյն ինքն կաթողիկոսական վիճակը իր նախագահականին, ու
բով և Արեւմտեան պատրիարքութեան մէջ ընկղմել կ'աշխատէր. Պատրիարքական
Աթոռը պաշտօնական բողոքներով և բանակցութեամբ ժամանակ կը վատնէր⁽¹⁾. Իսկ
նախագահականը քայլ առ քայլ կը յառաջանար Բրօքլանտայի ազդեցութեամբ:

(1) Հալածանաց պատրուակաւ Բրօքլանտայի կառավարութիւնը Կ. Պօլսոյ մասին մէջ
իրաւասութիւն կը գործածէր, եւ Կիւլիկիոյ պատրիարքունք առ ժամանակ մի վասն ստիպու-
ղական հարկի լռած ատենին եւս՝ ժամանակ ժամանակ իրենց պաշտօնական գանդատը ըրած
են, եւ Բրօքլանտայի կառավարութիւնն ալ անոնց գանդատը օրինաւոր դատած եւ պաշտօ-
նական գրութիւններով համոզած են զիրենք՝ խաղաղութեան ժամանակի սպասելու իրենց
ընդարձակ իրաւասութիւնը կատարեալ գործածելու համար: Ուստի երբ Օսմանեան բարե-
խնամ Տերութիւնը 1830-31 ին կաթողիկէ կրօնին ազատութիւն շնորհեց, եւ Բրօքլանտ-
տայի կառավարութիւնը Կ. Պօլսոյ մասին մէջ նախագահական նոր Աթոռ մը կանգնելու ելաւ,
այսպիսի տարօրինակ տրամադրութեան մը դէմ պատրիարքական Աթոռը իր պաշտօնական
բողոքը ըրաւ, բայց Հռովմայ ազդեցութիւնը խեղդեց Ազգային Աթոռին օրինաւոր ձայնը:
Նոյնպէս 1851 ին երբ նախագահական Աթոռին օգնիչ եպիսկոպոսներ կը դրուէր, թէեւ օրի-
նաւոր բողոքով մը այսպիսի տրամադրութեան մը կաթողիկոսական իրաւանց բողոքովին հա-
կառակ ըլլալը բարեյիշատակ Պետրոս Ը. կաթողիկոսը պաշտօնական գրութեամբ կը յայտնէր
ու ձայնը կը բարձրացնէր, 'ի վերայ այսր ամենայնի Բրօքլանտայի ազդեցութեամբ Հան-
գուցեային օրինաւոր ձայնը կ'խեղդուէր:

29 1048

1048. 60

ժամանակ ժամանակ Կ. Պօլսոյ ժողովրդեան կողմանէ շինծու աղերաներ կը հնարուէին կաթողիկոսական Աթոռոյն ընդ նախագահականին միութեանը համար, զորոնք թէվէրսուրուս կոնդակը կը յիշէ, և որոնց Ազգայինք ոչ օրինակը և ոչ յիշատակը ունին, և 1847 ին ալ նախագահ Հասունը առ ժողովն Բրօքականտայի ուղղեալ իր մէկ նամակովը գործադրական կերպ մը կը տրամադրէր թէվէրսուրուսի գրութեանը համաձայն: Պէսպէս պատրուակներով կաթողիկոսական վիճակէն քաղաքներ և գաւառներ նախագահական իրաւասութեանը կը փոխադրուէին⁽¹⁾: Եպիսկոպոսական իրաւասութենէ ազատ, բայց նախագահականին յամենայնի հպատակ նուսանաց միաբանութիւն մը կը հաստատուէր կաթողիկոսական վիճակին մէջ սիւնը ըստ նպատակաւ⁽²⁾: Նոյնպէս ընկերութիւն մը «Ազգային կրթութիւն» անուամբ, որուն Կ. Պօլսոյ նախագահը յիրաւանց անտի դահերէց պիտի ըլլար⁽³⁾: Քաղաքական պատրիարքութիւնը կամ ազգապետութիւնը՝ որն որ եւս և կաթողիկոսական վիճակին մէջ քաղաքական իշխանութիւն կը գործածէր, ձեռք ձգելու կ'աշխատուէր անդադար, կամ թէ այնպիսի ձեռաց յանձնել՝ որ նախագահական աթոռոյն սկզբանցը պաշտպան ըլլան: Վերջապէս կաթողիկոսական Աթոռը նախագահականին մէջ ընկղմելու նպատակին համար՝ ծերունի կաթողիկոսին մահուանը անգամ սպասելը շատ երեւնալով, զանիկայ հրաժարեցնելու խորհուրդ և դաւադրութիւն և մեծամեծ խոստմունքներ կըլլային (1858): Եւ երբ աս կերպով բան մը չէր վաստկուեր, ինքը Գ. Հասունը նախ հրաժարել կը ձեւացնէր որպէս զի իրեն օրինակին ծերունի կաթողիկոսն ալ հետեւցնելով, ինքը նորէն հաստատուի և կաթողիկոսութիւնը ձեռք անցնէ: Բայց ասոր ալ չյաջողելովը, կը հարկադրուէր գործքը ծերունեոյն վախճանին յետոյ թողլու, ուստի 1859 ին՝ դեռ կենդանի ըլլալով Կաթողիկոսը, յաջորդ կաթողիկոսի ընտրութիւնը՝ Քահանայապետական հրամանաւ մը ուղղեալ առ նուիրակ Ասորեստանի՝ կը խափանուէր⁽⁴⁾, և կաթողիկոսական Աթոռոյն միաբաններէն և Եպիսկոպոսներէն ոմանք կը շահուէին, որոնցմէ զԳեր. Հասուն յաջորդ ընտրելու եւս ստորագրութիւն կ'ընդունուէր (1860):

Այսպիսի տրամադրութեան մէջն էին ուրեմն երկուքին կողմանք, երբ 1866 ին սկիզբը կաթողիկոսական Աթոռը Պետրոսի Բ. ծերունեոյ մահուամբ կ'այրիանայր: Նոյն ընդ նոյն ՚ի 14 Յունվար, Ասորեստանի փոխանուիրակ Մ. Վալէրկա վերը յիշուած 1859 ին Հռովմայու տրամադրութեան գործադրութեանը համար

(1) Այսպէս փոխադրուեցան Ամասիա եւ Մարսուան, Արաբկեր եւ Խարբերդ:
 (2) Անարատ Յղութեան միաբանութիւնը՝ որն որ հիմնեց Գ. Հասունը իր նախագահութեան առաջին տարիները՝ որոնց կանոնները յայտնի կը բացատրեն այդ գրութիւնը:
 (3) Այս ընկերութիւնը հնարուեցաւ 1860, Կ. Պօլսոյ նախագահէն. նոյն ընկերութեան վախճանը պիտոր ըլլար բովանդակ Կիւլիկոյ կաթողիկոսական վիճակին մէջ գարոցներ հաստատել, անկախ կաթողիկոսական իրաւասութենէ, որովհետեւ նախագահը յիրաւանց անտի գահերէցն էր լիազոյն իշխանութեամբ, իսկ կաթողիկոսը պատուոյ միայն գահերէց կանուանուէր, որն որ թէ Պետրոս Բ. կաթողիկոսը եւ թէ Կակոնեան Ազգապետը մերժեցին:
 (4) Խօսակց. Քահանայապետական ՚ի 12 Յունիս, 1867:

չըջարերական կ'ուղղէր կաթողիկոսական Աթոռոյն Եպիսկոպոսացը: Հռովմայէն նոր եկած ուրիշ հրամանաւ մին ալ կաթողիկոսական Տեղապահը կը փոխէր: Երբորդ հրաման մին ալ ըստ վաղեմի սովորութեան դղերին ընտրութեան մասնակցելու իրաւունքը կը խափանէր: Չորրորդ հրամանաւ դարձեալ գղերը և Եպիսկոպոսներէն մէկ քանին՝ կրաւորական ձայնէն կը զրկէր: Վերջապէս ընտրութիւնը յանձն նախագահին Կ. Պօլսոյ աւելի կեդրոնացնելու համար խոստմունքներ կ'ըլլային. և Եպիսկոպոսաց երկուքը դեռ բացակայ՝ ընտրութեան հրաման կը տրուէր. նուիրակը Սիւնհոդին կը ներկայանայ՝ որ ուրիշ ատեն տեսնուած չէր, ընտրութիւնն ալ կենդանի ձայնիւ կատարել կ'որոշուէր, դումարեալ Եպիսկոպոսաց միտքը միութեան հակամէտ, նախագահ Հասունին վրայ եթէ միութեան գաղափարաւ և եթէ վալէրկային և այլոց միջամտութեամբը նախապաշարուած, ընտրութիւնը կը կատարեն. բայց միշտ Մ. Վալէրկային և անոր համամիտ եղողներուն մտացը և խորհրդոյը հակառակ վախճանաւ, զորն որ յայտնի բառերով կը հոգան բացատրել. «Ընտրեցնք կ'ըսեն, և հրատարակեցաք զՄեծարգոյ Անտոն Հասունեան զՄըքեպիսկոպոս և զՆախագահ Կ. Պօլսոյ ՚ի Պատրիարք Կիւլիկոյ, անուամբ Պետրոսի Թ. յաջորդ իրաւանց և առանձնաշնորհութեանց նորին հանդուցելոյ Պատրիարքի մերում»:

Եպիսկոպոսունք նախատես հոգացողութեամբ այս վերոյիշեալ կարճաօտ բայց ազդու բառերուն վրայ կը հիմնեն բոլոր կաթողիկոսական ընտրութեան զօրութիւնը, ընտրեալը ընտրութիւնը յանձն կ'աւնու, առանց եղեալ պայմանին վերայ բան մը յայտնելու, և Եպիսկոպոսներէն միայն Հաճեան Կեսարիոյ Արքեպիսկոպոսը իր քովը ՚ի Կ. Պօլիս կը կոչէ հեռագրաւ⁽¹⁾, և ՚ի Լիբանան գումարեալ միւս Եպիսկոպոսաց ալ շուտով տեղերնին դառնալ կը հրամայէ, որ չ'ըլլայ թէ Սիւնհոդոսին ուժը շարունակէ: Գասպարեան Կիւրոսի Արքեպիսկոպոսը և Գալբաճեան Ամասիոյ Արքեպիսկոպոսը ինքնին Հաճեանին կ'ընկերանան: Ընտրեալը ըստարարողութեան կաթողիկոս չ'օրհնուած՝ Պալիոնի ընդունելութեան համար Հռովմերթալու փախագ կը յայտնէ. և ըստ այնմ ալ Հռովմայու կը ծանուցանէ: Հռովմաշխարհքիս բոլոր Եպիսկոպոսները հրաւիրելու միտք ունենալով վեց ամիս ետքը կատարուելիք հարիւրեկի հանդիսութեանը համար, կուգէ որ նոյն ժամանակին պահուի և Պալիոնի տուչութեան հանդէսը: Ընտրեալը Հռովմայ այս յապաղումը ընտրութեան մէջ դրուած յաջորդ իրաւանց և առանձնաշնորհութեանց պայմանին պատճառաւն է կ'ըսէ, և այսպէս պայմանին պահպանութեան վրայօք կասկածանաց երկիւղ մը կը տիրէ Հայ Ուղղափառ հասարակութեան վրայ: Ի Կ. Պօլիս գտնուող Եպիսկոպոսունք, այսինքն Ամասիոյ՝ Կեսարիոյ՝ Կիւրոսի՝ և Անտիօքայ՝ պատրիարքական Աթոռոյն Արքեպիսկոպոսունք, և Թիւրքեան Պուրսայի Եպիսկոպոսը, կրկին անգամ նորընտիր Հասունեանէն գումարուած Եպիսկոպոսական ժողովոյ մը մէջ կը յայտնեն պաշտօնական և բացայայտ կերպով, եթէ պայմանը ընտրութեան այնպիսի էական

(1) Որ արդէն գործի եղած էր Գերապայառ Հասունին ընտրութեանը:

մասն է, որ չ'պահուած ժամանակը իրենց ընտրութիւնը ոչինչ ըլլալով, նոր ընտրութիւն մը ընելու իրաւանց մէջը կ'ըլլան: Ընտրեալը եպիսկոպոսոսաց սա բացարձակ յայտարարութեան իրաւունք կու տայ և կ'ընդունի, ու ժողովը կը հաւատարմացնէ պայմանաց պահպանութեան վրայօք. բաց աստի Ազգիս քանի մը մեծամեծաց առջեւ երդմամբ չափ կը հաստատէ, որ հաւատարիմ պիտի մնայ իր խոստմանցը վրայ = Գասպարեան կիպրոսի Արքեպիսկոպոսը կ'ուզէ 'ի Հռովմ աճապարեւ, որ գործը փութացնէ, ընտրեալը չ'հաճիր, Եպիսկոպոսունք Գասպարեանի խնդիրը կը հաստատեն. ինչպէս ընտրութիւնը, նոյնպէս անոր վերջաւորութեան հոգ տանելը մերն է, կրսեն, և Հաճեան կեսարիոյ Արքեպիսկոպոսը Գասպարեան Գերապայծառին ընկերակից տալով, հազիւ ընտրեալը կը հաճեցնեն: Հռովմ ասեղիու Եպիսկոպոսաց միջնորդութեամբը ընտրելոյն գալուստը կը փութացնէ, բայց Պալիոնի տուչութիւնը գաղտնի խորհրդով մը առջի որոշուած ժամանակին կը թողու: Պօլոյ ժողովրդեան կասկածը կ'աւելնայ, բայց ընտրեալը՝ Հռովմէն թէ իրեն և թէ իր հաւատարիմ Ազարեան վարդապետին մտերմական գրեթովը՝ Ազգը խաբխբելու կ'աշխատի՝ վստահացնելով իրաւանց անփոփոխ մնալուն վրայօք⁽¹⁾: Վերջապէս 'ի Հռովմ 'ի հանդէս կը գումարին եթէ ազգային և եթէ այլ շատ մը Եպիսկոպոսունք: Հռովմ ազգային Եպիսկոպոսաց ներկայութիւնը մանաւանդ կիւլիկիոյ Աթոռոյն Եպիսկոպոսաց նախընթաց ընտրութիւնը հիմ ընելով իրեն, թէ և իրաւամբ կը զլանայ Գեր. Հասունին Կ. Պօլոյ պատրիարքական տիրոջը. բայց Պալիոնի տուչութեան պատրուակաւ նորատեսակ պատրիարքութեան շէնքը կ'սկսի կանգնել Գ. Հասունին վրայ, և Բէվէրսուրուս կոնդակը գաղտ կը յօրինուի: Այն պիտի կոնդակ մը, որ առ երեսս կիւլիկիոյ կաթողիկոսութեան վրայ կը խօսի, բայց իրօք նոր ձեւ կաթողիկոսութիւն մը կը հնարէ, ուղղակի հակառակ ընտրող Եպիսկոպոսաց մտացը և անոնցմէ սահմանուած պայմանացը. անանկ որ՝ կիւլիկիոյ պատրիարքութեան ու բար. Պետրոսի Ը. ին յաջորդ ընտրուողը՝ սոսկ տիրոջնեւուն նիւթական յաջորդութեանը մտնելով, Աթոռոյն իրական յաջորդութենէն բոլորովին զուրկ կը մնայ. ինչպէս կը հաստատեն սա ամենքը նոյն ինքն Բէվէրսուրուս կոնդակին սա խօսքերը, նոր իմն պատրիարքական հաստատութիւն, (haec ferme nova Patriarchatus Armenii institutio): Երբ 1791 ին Գաղղիոյ Եպիսկոպոսական Աթոռները պակսեցնելու համար Հռովմայէն կոնդակ մը կը խնդրուէր, Պիոս Զ. Գահանայապետը առաքելական թղթով մը պատասխան կու տար, եթէ “Աս բանը Եպիսկոպոսաց իրաւանց դպչելուն համար պէտք է նախ անոնց հարցնեմ, որ չ'ըլլայ թէ անոնց անիրաւելովս, արդարութեան օրինաց անիրաւիմ. . . բաց աստի սա բանը ժողովրդոց զրկում մը ըլլալով, որովհետեւ ա՛լ ասկէ ետքը դիւրութեամբ և շուտով չ'պիտի կրնան իրենց հովուացը մտնեալ, պէտք է նախ անոնց ալ կամքը

(1) Թուղթ Հասունի առ Մեծ. Յակոբ Էֆէնտի կէօչէեան, Թուղթ Ազարեանի առ Յ. Հ. Աղեքսանդր Պէչիկթաշեան:

“գիտնամ ստուգութեամբ”: Կ'երեւայ թէ նոյն ձեւը տալու համար Բրօքական տայի պաշտօնատէրներուն թելադրութեամբը, յանկարծ ազգային Եպիսկոպոսունք օր մը Սրբազան Քահանայապետէն կը կոչուին, նոյնպէս կը կոչուի ընտրեալը և Մ. Վայէրկան:

Ազրիանոս Քահանայապետը կը գրէր առ Մեծն կարողոս, “Ոչ բնաւ (Եպիսկոպոսական) ընտրութեանց մէջ մաս կ'ունենանք մենք, ոչ ալ ունենալ կը բաղձանք, բայց կ'ուզենք որ՝ ոչ ալ Ձեր վսեմութիւնը սա բաներուն միջամտութիւն ընէ, այլ ինչպէս որ գղերէն և ժողովրդէն . . . ընտրեալը կանոնական է, և կարգաց և սովորեալ աւանդութեանց հակառակ չէ, զայն կը պատուիրենք”: Պիոս Թ. Գահանայապետը իր առջեւը ներկայացած Ազգային Եպիսկոպոսաց յորդոր մը կը խօսէր իր նախորդին խօսիցը բոլորովին հակառակ, և Բէվէրսուրուսին իմաստին անդգալի կերպով համաձայն. և երբ ամենքը իրենց տժգոհ, բայց նշանական լուծութեամբ կը մերժէին Սրբազան Պապին առաջարկութիւնը, Հասուն Գերապայծառը կ'աճապարէր. ծնկան վրայ կուգար, Ձեր Սրբութեան բաղձանքը մեզի հրաման է կ'ըսէր⁽¹⁾: Ազգային Եպիսկոպոսունք նոյն օրը ընտրելոյն իսկ առջեւ գանգատիլ կ'սկսին գործոյն առջեւը առնելու պէտք եղածը ընելու դիտմամբ: Ընտրեալը վախնալով որ Եպիսկոպոսունք չ'ըլլայ թէ գրաւոր տրամադրութեան մը ձեռք զարնեն, որով իւր շինուածքը քայքայի, Եպիսկոպոսները կը համոզէ ըսելով թէ Ս. Գահանայապետին առաջարկութիւնը գրաւոր բան մը չէ, թո՛ղ որ կ'ըսէր, մեր ազգը արդէն պիտի յայտնէ իւր ընդդիմութիւնը, ուրեմն անոնց թողունք որ աւելի յաջող ելք մը ունենայ, և մենք տարեկան նպաստէն՝ որ մեզի 'ի շնորհս Հռովմայ Լիոնէն կը հանգանակուի վայրապար չ'ըրկուինք, և քանի մը ընելիք խընդիրքներնիս մերժուելու վտանգի մէջ չ'թողունք զմեզ⁽²⁾:

Աս վախճանաւ ուրեմն Բէվէրսուրուս կոնդակը առանց հրատարակել տալու, և յոյժ գաղտնութեան տակ պահելով՝ կ'աճապարէ ընտրեալը Եպիսկոպոսաց հետ միատեղ 'ի Կ. Պօլիս դառնալ: Եպիսկոպոսունք (բաց մէկ երկու հատէն) այս ամեն դարձուածոց անձանթ ըլլալով, ազգային ծիսիւ կաթողիկոս կ'օրհնեն զինքը 'ի Բերայ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն մէջ: Հասուն Գերապայծառը կաթողիկոսական օրհնութիւնը ընդունած և առանց Ազգին գիտութեան արքունի Պէրաթն ալ ձեռքը անցնելէն ետքը, Եպիսկոպոսները տեղերնին դառնալ կը փութացնէ, և զինքը բաւական յորացած կարծելով՝ Բէվէրսուրուս կոնդակը կը հրա-

(1) Հասուն Գերապայծառը իր շնորհակալութեան ձառին մէջ՝ որ Պալիոն ընդունած օրը խօսեցաւ, Երջանի կը կոչէ սա օրը՝ որուն մէջ Ս. Գահանայապետին բաղձանացը անգամ հպատակութիւն յայտնեց: (Երես 43. Տպագր. Հռովմայ):

(2) Երեք աղերսագիր պատրաստուած էր նոյն օրերը, մէկուն մէջ Լիոնեան հանգանակութեան աւելնալը կը խնդրուէր Ս. Գահանայապետէն, միւսովը Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի պատուական զլուխը, որ Նաբօլի քաղքին մէջ պահուած էր, եւ երրորդովը Հռովմայ մէջ Ազգային Գարոց մը կանգնուիլը:

տարակէ : — Այս օրինակ կոնդակով և Պէրաթով ուժովցած նորատեսակ կաթողիկէս մը յանկարծակի դիմացը կ'ունենայ Ազգը ժողովոյ մը մէջ, որն որ նոյն ինքն Վ. Հասունը գումարեց 'ի 20 Հոկտեմբերի 1867 : Ժողովքը կը զայրանայ և բողոքով կը ցրուի, և ժողովուրդը առանձինն գրաւոր բողոք մըն ալ 'ի 11 Գեկտեմբերի Բ. Դրան կ'ուղղէ : Եպիսկոպոսունք Բէյէրսուրուսին հրատարակութեանը հետ ժողովըրդեան խռովութիւնը լսելով և Հասուն Գերապայծառին Հռովմայ մէջ ըրած թերադրութիւնը և յուսադիր խօսքերը միտքերնուն մէջ սեւեռած, յաջող ելից կսպասէին : մանաւանդ որ Հասուն Գերապայծառը միշտ կասկածանայ մէջ ըլլալով որ չ'ըլլայ թէ Եպիսկոպոսունք պաշտօնական գործի մը ձեռք զարնեն, առիթով մը կը փութայ գրով ծանուցանել իրենց թէ ամեն բան դեռ առժամանակեայ դրեց մէջ ըլլալով, պէտք չէ շփոթիլ քանի որ մերձաւոր Ազգային Սիւնհոգոսին մէջ ամեն բան պիտի տրամադրուի ամենուն բաղձանացը համեմատ : Ուրեմն Եպիսկոպոսունք Ազգային Սիւնհոգոսին մէջ գործը վերջացնելու յուսով որն որ տարիէ մը ետքը պիտի գումարուէր, լուռ կը կենային : Հասուն Գերապայծառը իր զօրութիւնը կշռելով դէմը եղածը զօրաւորագոյն կը գտնայ, ուստի տկարացնելու համար ժողովրդեան մէջ երկպառակութիւն կը թողու իր գործակատար քահանայից միջնորդութեամբը :

Պէրաթին ու կոնդակին խնդիրներովը մէկտեղ Հասուն Գերապայծառին անձնական թերութեանց խնդիրներն ալ մէջ տեղ կ'ելլան, և ընդհանուր տեղոհութիւն մը կը տիրէ : Հռովմայս անակնկալ վրդովմունքէն շփոթած, թէ և գաղտնի հրահանգներով Մ. վալէրկան Պօլիս կը ձամբէ, բայց Բրօքականտայի պաշտօնատէրները Ազգային Եպիսկոպոսներէն զմանա կը վստահացնեն թէ Մ. վալէրկան Ազգը գոհ ընելու հրահանգներ ունեցած է, մինչդեռ յետոյ 'ի գործոց և 'ի ներքին ծանօթութեանց կ'ստուգուի, որ Մ. վալէրկան Պօլիս խաւրուած է եղեր որպէս զի ո՛ր և իցէ հնարք գործածէ Գեր. Հասունին նորաձեւ կաթողիկոսութիւնը ամրացնելու և Հասունեան կողմնակցութիւնը զօրացնելու համար : Ազգը այսպիսի օտար ազդեցութեանց ներքեւ ճնշուած, տակաւին իր ձայնը կը բարձրացնէ և իւր իրաւանց գործադրութեանը ճար կը փնտռէ :

Հասուն Գերապայծառը Հռովմայ խորհուրդովը Պօլիսէն առժամանակեայ կերպով հեռանալ կ'ստիպուի, և յԱսորիս երթալ :

Անոր այս առժամանակեայ բացակայութիւնը թէ և նոր խռովութեանց առիթ չ'իտար, բայց Ազգը կիւլիկիոյ Աթուոյն Եպիսկոպոսացը հետ միացած մերձաւոր Սիւնհոգոսին կ'սպասէ : Հասուն Գերապայծառը կը վախնայ իւր բացակայութենէն, և նոյն իսկ պաշտօնատէր թողուցած անձանց վրայ կասկածելով վեց ամիսէն ետքը յանկարծ կ. Պօլիս կը հասնի, և Ազգային Սիւնհոգին ժամանակը կ'որոշուի :

1869 Յուլիս 3 ին Սիւնհոգը կը բացուի, ժողովուրդը անմիջապէս իր բողոքագրերը կ'ընծայէ, և քանի մը գրուածներ կը հրատարակուին, որոնք Հասուն Գերապայծառին ընթացքը, կաթողիկոսութիւնը և ընտրութիւնը կը նկարագրեն : Հասուն Գե-

րապայծառը իր առջեւը եղած վտանգը տեսնելով աշխարհական գլխերը կ'օնաւորական միաբանութեանց դէմ կը գրգռէ, որով Եպիսկոպոսաց մէջ ալ տարածայնութիւն կը թողու, և բաւական թուով անոնցմէ իրեն կողմնակից կը շահի : Ժողովքը գեան բողոքին գոհացուցիչ պատասխան տալու խնդիրը Սիւնհոգին մէջ կը յուզուի, Հասուն Գերապայծառը իրեններովը արհամարել յաւէտ կ'ուզէ Ազգին ձայնը, մանաւանդ թէ կը ջանայ որ Եպիսկոպոսները յայտարարութեամբ մը Ազգը յուսահատ ցընեն : Սիւնհոգը առաւելութեամբ ձայնի չընդունիր Հասունեանց այս թերադրութիւնը : վերջապէս շատ մը դժուարութիւններէն ետև յանձնաժողով մը Սիւնհոգով կը սահմանուի, որ Ազգին բողոքները պաշտօնական կերպիւ լսէ : Բացարձակ առաւելութեամբ քուէից Սիւնհոգոսական Հարց չորս Արքեպիսկոպոսունք կ'ընտրուին և մէկ Եպիսկոպոս, ընդ ամենն հինգ անձինք՝ նոյն յանձնաժողովոյ անդամք : Այս յանձնաժողովը կ'որոշէ քանի մը վարդապետք իրր Աստուածաբան, և այլ և այլ նիստերու մէջ քարտուղարաց միջնորդութեամբ Ազգին իրաւացի պահանջմունքները կը նշանակուին :

Հասուն Գերապայծառը իրեն դէմ ատեան մը բացուած կը տեսնայ, որուն առջին անհնար էր արդատանալ, իր կողմնակից աշխարհականներուն կը թերադրէ, որ քանի մը խնդրոյ համար իրենք ալ Սիւնհոգէն ունկնդրութիւն խնդրեն : Յանձնաժողովը զանոնք ալ լսել կը հաճի, և ունկնդրութեան մէջ կը տեսնայ որ Հասունեանք խռովութեանց թէեւ ուրիշ կերպարանք մը տալ աշխատած են, բայց զըլխաւոր նիւթերուն մէջ ընդհանրութեան զգածմանց համաձայն կը խօսէին : Հասուն Գերապայծառը մէկ կողմանէ յանձնաժողովոյն գործքը Սիւնհոգին հանելը կը յապաղեցնէ կերպ կերպ հնարքներով, միւս կողմանէ 'ի միասին Եպիսկոպոսաց ընտրութեան Բէյէրսուրուսի կանոնադրութիւնը 'ի գործ դնելու մտք կ'ստիպէ Եպիսկոպոսները Սեբաստիոյ այրիացեալ թեմին վրայ Եպիսկոպոս անուանելու, և միանգամայն աս բռնութեան գործը բաւական չսեպելով Սիւնհոգէն դուրս գաղտագողի յայտարարութիւն մը կը պատրաստէ և Առաքելեան Յովսէփ Եպիսկոպոսին ջանքովը, առանձին առանձին Եպիսկոպոսաց կերպով մը նոյն յայտարարութեան ստորագրել տալու կ'աշխատի, որպէս զի նոյն յայտարարութեամբ իրեն կաթողիկոսութիւնը Եպիսկոպոսաց բերնովը վաւերացնէ և իր վրայ վաւերացած ամբաստանութեանց մուրհակը պատռէ :

Եպիսկոպոսներէն քիչերը արիութիւն կ'ունենան, այդ խաբէական առաջարկութիւնը մերժելով իրենց ստորագրութիւնը զլանալու : ոմանք ալ բարեմտութեամբ ստորագրած ըլլալով, յետոյ դաւադրութիւն մը ըլլալը իմանալուն պէս ստորագրութիւննին յետս կը կոչեն, որով Գ. Հասունը իր ակնկալութենէն ոչ միայն ձեռնունայն կ'ելլայ, այլ և Եպիսկոպոսաց մտացը հաստատութեան վրայ ալ չարաչար կը զայրանայ :

Վերջապէս Հռովմ Տիեզերական ժողովքին երթալու ժամանակը կը հասնի, և յանձնաժողովոյն գործքը Սիւնհոգոսական դիւանին կը յանձնուի : Ժողովուրդը

ոչ Սիւնհոգէն շահելով և ոչ յանձնաժողովէն, յոյսը իր Եպիսկոպոսացը Հռովմէրթալուն կը դնէ, աղերս մը կ'ընէ Սրբազան Բահանայապետին որ Ազգային Եպիսկոպոսներէն ճշմարտութեամբ իր կացութիւնը լսէ և արդարութիւն ընէ. նոյն յուսով ըստ մեծի մասին կը վարուին և Եպիսկոպոսունք մանաւանդ թէ առաւել արիւ ազոյնները առանձին թղթերով դեռ ճամբայ չելած իրաց վիճակը Սրբազանին կը տողեն. և ինչուան որ իրենք կարող ըլլան գործել 'ի Հռովմ', թէ իրենց ընտրութեան պայմանին կարեւորութեանը նոր հաստատութիւն մըն ալ տալու համար, և թէ ժողովրդեան հանդարտութեանը համար, ըստ սովորութեան Կիւիլիոյ Աթոռոյն՝ Գրան Կաթողիկոսարանին Գասպարեան տիտղոսաւոր Արքեպիսկոպոսը Կաթողիկոսական Տեղապահ որոշել կու տան: Հասուն Գերապայծառը Եպիսկոպոսաց այս տրամադրութեանը չկրնալով դէմ կենալ, չէ թէ միայն Հայրապետանոցին պաշտօնէիցը ինքնագլուխ գործառնութիւններ կը յանձնէ, այլ և գաղտնի տնօրէն ժողով մըն ալ կը կազմէ իր կողմնակից Բահանաներէն, և ոչ այսչափ միայն, այլ և իր կամացը կոյր գործադիր աշխարհական մըն ալ Տեղապահին հսկող և հրամանատար կը կարգէ յամօթ և յանարգութիւն Եպիսկոպոսական բարձր աստիճանի: Տեղապահը այս օրինակ ճնշուած՝ տակաւին ժողովրդեան խաղաղութեան հոգ կը տանի: Քահանայներէն հեռատեսութիւն ունեցողները կ'իմանան եթէ առժամանակեայ խաղաղութիւնը ապագային երաշխաւորութիւն չունի, ուստի և իրենց պարտք կը սեպեն Սրբազան Բահանայապետին Հռովմայ կրկին տեղեկագիրներ ուղղել Գերապայծառ Հասունին ընթացիցը դէմ:

Հասուն Գերապայծառը իր թեւակիցներովը Հռովմ հասնելուն պէս տեսարանը կը փոխուի և ծպտեալ վարագոյրը պատուելով յայտնապէս ոչ միայն Բէվերստուրուսի շատագով կը կանգնի, այլ և նոյն կոնդակով պատասպարիլ կը ջանայ, և Եպիսկոպոսաց ահարկու երեւնալու համար Բրօքականտայի պաշտօնէից ազդեցութեամբը Եպիսկոպոսներէն գաղտնի Գասպարեան տեղապահը Հռովմ բերել կուտայ, և փոխան նորա այս ամեն եղելութեանց մէջ իրեն հետ համամիտ եղող Առաքելեան Յովսէփ Եպիսկոպոսը՝ Տեղապահ անուամբ կը խաւրէ:

Գաղանձեան Անտիօքայ Արքեպիսկոպոսն ալ շատ մը բռնադատութիւններ կ'ունենայ Յայտարարութեան մը ստորագրելու, որուն մէջ Հասուն Գերապայծառը իբր օրինաւորապէս Կիւիլիոյ Աթոռոյն յաջորդութեանը մտած հրապարակաւ կը խոստովանուէր, և Բէվերստուրուս կոնդակն ալ կ'ընդունուէր: Եպիսկոպոսներէն աւելի համարձակները այսինքն է Ամասիոյ, Գերմանիոյ, Տիգրանակերտի, Կեսարիոյ Արքեպիսկոպոսները, Առաքելեանի Տեղապահ խաւրուելուն դէմ գրով կը բողոքեն, և Սրբազան Բահանայապետէն կը խնդրեն որ եղելութեանց վրայօք իրենցմէ առանձին տեղեկութիւն ուղղէ, նմանապէս մասնաւոր պաշտօնական կերպով նոյն բանը կը խնդրէ Գասպարեան Արքեպիսկոպոսը, բայց պատասխան չեն ընդունիր, մանաւանդ թէ իրենց դէմ սպառնացողական գիրք մը կը տեսնան Բրօքականտային պաշտօնականներէն և Հասուն Գերապայծառէն:

Հասուն Գերապայծառը Առաքելեան Եպիսկոպոսին ձեռքը յանձնած վկայապահին մէջ աս հետեւեալ խօսքերը նշանակել տուած էր. «Մեր պատրիարքութեան նկատմամբ Սուրբ Աթոռոյն կարգադրութեանցը հակառակողները, կ'ըսէր, ուղղափառական հոգւոյ և եկեղեցւոյ գլխոյն իշխանութեանը կը հակառակին, և նոյն ինքն Գրիստոսի կամայը և հրամանաց դէմ կը զինին»:

Այս առաջին անգամն էր որ Հասուն Գերապայծառը պաշտօնական կերպիւ Բէվերստուրուսին հպատակեցնել կ'սպառնար զԱզգը, ուստի ժողովրդեան մեծ մասը յայտնի գործոյ մը դէմ յայտնի գործով յուզուած խնդրոյն վերջաւորութիւն մը տալը հարկ դատեց:

Յունվար 23 ին պաշտօնական յայտարարութեամբ մը հրապարակաւ ծանոց եկեղեցւոյ գլխոյն ունեցած հպատակութիւնը և ուղղափառ հաւատոյ մէջ մնալու անխախտ գիտաւորութեանը հետ մէկտեղ, Հասուն Գերապայծառին իրաւասութիւնը չճանչնալը և Արեւելեան հին բարեկարգութենէն և իւր սեփական Եկեղեցւոյն իրաւունքներէն մասնաշաղկապ չբաժնուելիքը:

Այս յայտարարութիւնը ոչ ոք դատապարտելի կը դտնայ. ուստի և գղերին կէսէն աւելին և ամեն կարգէն, այսինքն Աշխարհական գղերէն՝ Ալունեսներէն՝ Անտոնեսներէն՝ Զմմաուու միաբաններէն և վենետիկոյ Միսիթարեաններէն, ժողովրդեան այս մասին կը յարին՝ որն որ Տերութենէն իրենց նախկին Հայ Բաթուրիկ անուամբը կը յարգուի, և Գ. Հասունին իշխանութենէն անկախ կը ճանչցուի: Հասունեանք Առաքելեանին վկայականին մէջ եղած իմաստը իրենց խօսիցը հիմ ընելով, ամեն տեղ ազաղակ կը վերցնեն, և զՀռովմ և զԵւրոպա կը խլայնեն, և յայտնի դատապարտութիւն կը խնդրեն 'ի Հռովմայ ազգայնոց համար⁽¹⁾. որոնց դէմ ճշմարտութիւնը վկայելու, և ստուգութիւնը յայտնելու համար ԵՄ Մարտի 1870 եօթը Եպիսկոպոսունք կը միաբանին 'ի Հռովմ յայտարարութեան մը ստորագրել, ոյսինքն է Գալլպէսեան՝ Արեւելեան՝ Պահտիարեան՝ Հաճեան՝ Անճարակեան՝ Գասպարեան և Գաղանձեան Կիւիլիոյ Աթոռոյն Արքեպիսկոպոսները:

Հասուն Գերապայծառը կ'ուղէ վէճը ընդհանրացնել որ իր անձը պատասխանատուութենէ խալսէ: Բէվերստուրուս կոնդակին մէջ եղած խոսամանքը կը յիշեցնէ Բրօքականտայի պաշտօնատեարց՝ որ ուրիշ Արեւելեան պատրիարքաց ալ պի-

(1) Չորս աշխարհական անձանց հեռագրոյն թարգմանութիւնն է ուղղեալ առ Գեր. Հասուն 'ի Հռովմ 'ի 16 28 Փետրվար 1870. «Հակառակորդը դեկտ. 2/14 բողոքոյն նկատմամբ Սուրբ Աթոռոյն լուծութիւնը 'ի նպաստ իւրեանց կը մեկնեն. Գղերին եւ ժողովրդեան կէտը նոր եկեղեցի մը ձեւացուց՝ օրինաւոր եւ կաթողիկէ հրատարակելով զայն, թէ որ բողոքոյն մերժումը եւ այս հերձուածամիտ եկեղեցւոյն դատապարտութիւնը անմիջապէս չը հասնիր, ցրումը եւ փոխադրական ախար շուտ պիտի ընդհանրանայ, եւ չարը գրեթէ անդարմանելի պիտի ըլլայ. մենք աս բանիս վրայօք անհամբեր կ'սպասենք Սուրբ Աթոռոյն վճռոյն, սպա թէ ոչ Սուրբ Աթոռոյն յարգը եւ մեր սեփական պատիւը վտանդի մէջ է. բանը ստիպողական է, եւ որ եւ իցէ յապաղումը հաւատացելոց խղճին մեծապէս վնաս կը բերէ, անմիջական պատասխան (պէտք է) Բրօքականտային կողմանէ»:

տի հրամայուէր կոնգակին օրինադրութեանը հպատակիլ . ուստի ֆաղդէացուց Պատրիարքը արգելանք չափ կ'ստիպուի . Մելքիթաց Պատրիարքը Եպիսկոպոսաց բաղձութեան մը մէջ գրեթէ կը յանդիմանուի . Ասորոցը յաւէտ պատրիարքութենէն հրաժարիլ յանձն կառնու , և սրանեղութեամբ մահիճ կ'իյնայ , քան թէ իրաւունքները մասնել . Մարտնոցը նախագուշակելով՝ բնաւ իսկ Հռովմ չերթար , Արեւելեան Եպիսկոպոսները կը սարսափին , իսկ Եւրոպացիներէն՝ որոնք որ ըստ մասին կը տեղեկանան , Հասուն Գերապայծառին վրայ գայթակղած՝ Ազգին կը կարեկցին = Հասուն Գերապայծառը դեռ զինքը ընտրող Եպիսկոպոսներուն մեծ մասը չէր կըրցեր ահացնել , ուստի անոնց միութենէն կը կասկածէր . որ չըլլայ թէ իր պատրիարքութիւնը չճանչցող հասարակութիւնը և գլխորդ հոգեւորապէս կերպացնեն , մանաւանդ միւս Արեւելեան Պատրիարքաց ցուցուցած հաստատութենէն ետքը . և այսպէս թէ և Անճարակեանը հիւանդութեանը պատճառաւ Հռովմէն հեռացեր էր , բայց Գալղաճեան՝ Արեւելեան և Հաճեան Արքեպիսկոպոսները քովը կը սլահէր . Գասպարեանն ալ հսկողութեան տակ էր , նոյնպէս Պահտիարեանը՝ թէ և անիկայ արիւնքութեամբ մը իր քովէն հեռանալով Անտոնեանց վանքը պատասպարուած ըլլայ : Իսկ Գաղանճեանին վրայ որ միանգամայն Անտոնեանց Աբբասայրն էր , ամեն կերպ բռնութիւն յայտնի կը գործածուէր , և կենացը վտանգ կ'երեւար , և բանտարգելութեան յայտնի սպառնալիք կը տրուէր , և արբասայրութենէն դադրելու հրաման . ուսկից ետքը Անտոնեանց խնդիրը առաջ կու գար , որպէս զի բուն հիմնական խընդիրը չփոթի և միւս միաբանութեանց ահ պատճառէ : Այս եղանակ զգուշութեանց հետեւանքն էր Կ. Պօլսոյ Արեւելեան Հայ Բաթրիարքի գլխորդ յանուանէ կախակայեալ հրատարակել տալը , որպէս զի եթէ Եպիսկոպոսաց Պօլիս դառնալը յաջողի երբէք , գէթ անոնց հետ հաղորդակցելու համար բարոյական արգելք մը ծնանի : Այժմ յաջողեցաւ Պահտիարեան և Գաղանճեան Արքեպիսկոպոսաց Աստուծոյ առանձին նախախնամութեամբը Հռովմէն ելլալ , և Կ. Պօլիս հասնելով՝ իրենց ներկայութեամբը ժողովուրդը և յանիրաւի զրպարտեալ քահանայները մխիթարել , որով և հնարուած նիւթական արգելքներուն հետ բարոյականին ալ յաղթել վերջապէս Գասպարեան Արքեպիսկոպոսն ալ ազատութիւն կ'ունենար աս երկու Արքեպիսկոպոսաց հետ 'ի Կ. Պօլիս դանուիլ : Հասուն Գերապայծառը արտաքին վեհերեւոյթ մը ցուցունելու համար ժողովրդեան , խնդրոյն նոր կերպարանք մը տալով՝ զրպարտական հնարքներով՝ Բրօբականայի աջակցութեամբը Առաքելական թուղթ մը ձեռք կը բերէր Մայիսին վերջերը , սրուն մէջ Սրբազան Պապը Եկեղեցույ զրկէն 'ի բոց թօթափել կ'սպառնար ան ամենքը՝ զորոնք կ'ենթադրէր եթէ արգէն եկեց Կաթողիկոս Եկեղեցույ զրկէն անգամ ըլլան , որով վայրապար Բահանայապետին նուիրական պատիւը կ'անարգուէր :

Աս միջոցիս մէջ Եպիսկոպոսաց ծերագոյնը՝ Գալղաճեան Ամասիոյ Արքեպիսկոպոս՝ Կ. Պօլիս գալով , կը տեսնայ Հասունեանց անիրաւ ընթացքը և Հասուն Գերապայծառէն լսած յեղափոխեալ ծանօթութեանց՝ ներկայ խնդրոյն հետ բոլորովին

հակառակ ըլլալը , և 'ի սկզբանէ անտի իւր իսկ պաշտպանած խնդրոյն գիրքը և իսկութիւնը բնաւ խախտած չըլլալը , և Եկեղեցույ գլխէն ոչ ոք ինքը զինքը անջատած ըլլալը , մանաւանդ թէ իրաւացի խնդրոյն ուժը ոչնչացնելու համար , բոլորն ալ Հասունեան որողայթէ ելած ինքնաստեղծ հնարագիտութիւններ ըլլալը , ուստի իր երեք Եպիսկոպոսակից եղբարքը հետ միատեղ անմեղ Գլխորդին և ժողովրդեան խիղճը կը հանգարտեցնէ : Իսկ Տերութիւնը որ իր արքունական Պէրաթը Հասուն Գերապայծառին շնորհած էր , հետզհետէ անոր նորահնար պատրիարքութեանը և Բէվէրսուրուս կոնգակին նկատմամբ տեղեկութիւններ ունենալով , երկուքին վրայ ալ դժկամակութիւն կը յայտնէ , եւս սուսուել երբ իր բարեկամական բանակցութիւնը և դեսպանութիւնը Հռովմէն կը մերժուէր : Հասուն Գերապայծառը 'ի Կ. Պօլիս կ'աճապարէ , և յանուն Հռովմայ Տերութեան 'ի մասին Ազգային իրաւանց , ընտրութեան մասնակցութիւն կ'առաջարկէ . և երբ ասով ալ չյաջողիր , այնպիսի ձեռնարկութիւն մը կը պատրաստէ որ թէ Բէվէրսուրուսին և թէ իրեն պատրիարքութեան վերնալովն իսկ՝ Ազգայինները չվաստկին , հապա թէ կրօնական սեփհականութիւնք և թէ ընտրողական և ընտրելիութեան իրաւունք՝ իրեն ներուն մէջ ամփոփուած մնան . կամ թէ նոյն իսկ իրեն դէմ եղած դատախազութիւնք ոչնչանան : Աս բանիս կրօնական վճիռ մը կը պահանջուէր , և վճռոյն ալ կրօնական յանցանք : Առաքելեանին վկայականին մէջ պաճուճուածը բաւական չէր սեպուեր , ուրեմն պէտք էր որ վատիկանեան ժողովոյն վէճը մէջ տեղ նետուեր . Ազգին խնդրոյն հետ յարակցութիւն ստեղծուեր , որով Հասուն Գերապայծառը ամբաստանեալ վիճակէն՝ դատախազութեան կ'անցնէր , մանաւանդ թէ դատաւոր կը կանգնուէր . Մ. Բլիւիմն ալ ատենակալ կ'որոշուէր : Հասուն Գերապայծառին թերաղբութեամբը չորս Եպիսկոպոսաց մէջ մէկ մեղադրանաց թուղթ կ'ուղղուէր Մ. Բլիւիմն , և թղթոյն օրինակը Եկեղեցեաց մէջ կը հրատարակուէր : Հրապարակաւ զրպարտուած չորս Եպիսկոպոսները , իրենց Եկեղեցեացը մէջ հրապարակաւ ժողովրդեան միտքը կ'ուղղէին : Ֆաղդէացուց Պատրիարքն ալ՝ որ Հռովմէն նոր 'ի Կ. Պօլիս եկած էր , 'ի հոգեւորական հաղորդակցութիւն կու գար Ռսկեբերան Եկեղեցուցին , և Սուրբ Պատարագի մատուցմամբ առաջի Ուղղափառ Եկեղեցուց հրապարակաւ արդարութեան կը վկայէր : Աս ամենքը տեսնալով՝ պէտք կ'ըլլար ուրեմն Հասուն Գերապայծառին աւուրբ յառաջ կատարումն տալ իր խորհրդոյն . ուստի ամեն ջանք 'ի գործ կը դնէ , 'ի Տ. Հոկտեմբերի Մ. Բլիւիմն ազգարարութիւն մը կը հրատարակուի ուղղեալ առ քահանայս , և հաւատոյ դաւանութեան ձեւ մը՝ որուն մէջ Բէվէրսուրուս կոնգակով մէկտեղ , նոյն հիման վրայ յորինուած քանի մը կոնգակներ և հրահանգներ իբր մասն հաւատոյ բովանդակուած էին : Այսպիսի նոր դաւանութեան ձեւոյն ստորագրելու համար տասը օր պայմանաժամ կը տրուէր սպառնալիք հանդերձ 'ի չստորագրելն հերձուածող հրատարակել : Ամսոյն 14ին քահանայք պաշտօնական յայտարարութիւն մը կ'ընեն 'ի պատասխանի ազգարարութեան . Մ. Բլիւիմն թերութիւն մը չգտնար յայտարարութեան մէջ .

բայց Հասուն Գերապայծառին և իւր գործակցայր հնարքը վերջապէս կը համոզէ զինքը՝ անոնց անիրաւ խորհուրդը առաջ տանելու . ուստի դատապարտութեան նիւթ մը չկարենալով գտնալ միտքերնին չար պիտի ըլլայ՝ կ'ըսէր Մ. Բլիւիմը , և շատ մ'ալ ինքնաստեղծ մոլորութիւններ հնարելով՝ ֆահանաներով մէկտեղ չորս Եպիսկոպոսներն ալ՝ անխիղճ հերձուածող կը հրատարակէր յՁ Նոյեմբերի (Ն. Տ.) : Եւ ասկէ ինչ կը հետեւէր , եթէ ոչ՝ եղածը զրպարտութեան և վրէժխնդրութեան գործ կը դատուէր և անիրաւ ձեռնարկութիւն . և Տերութիւնը Բէվէրսուրուս կոնգրակը և Բէվէրսուրուսի վրայ յօրինուած Գեր . Հասունին պատրիարքութիւնը կը մերժէր . Արեւելեան Հայ Քաթողիկոսները՝ առջի բուն Քաթողիկ հասարակութիւնը կը ճանչնար . և այսպէս ինչ բանի համար որ աս անիրաւ բանադրանաց շանթը Գեր . Հասունեանէն կը հնարուէր , այն նպատակին բնաւ չէր հասնուեր , ընդունայն տեղ եղած անիրաւ բանադրանքը՝ իր ոչնչութեան մէջ կը մնար : Բայց հաւատքը կը նուազէր հաւատացելոց սրտին մէջ , բարեպաշտութիւնը կը մարէր , գայթակղութիւնը կը տիրէր , երկպառակութիւնը կը հաստատուէր , որոնց ամենուն գէթ ըստ մասին առջեւը առնելու նպատակաւ չորս Եպիսկոպոսներ հարկ կը դատեն ՚ի ՁՅ Հոկտեմբերի (Հ. Տ.) շրջաբերական մը ուղղել առ հաւատացեալ ժողովուրդ , որպէս զի միտքերը բժշկեն , և Հռովմայ ֆահանայապետաց գլխաւորութեան վրայ եղած ուղիղ և ընկալեալ վարդապետութիւնը բացայայտ բառերով քարոզեն , և ՚ի սէր և ՚ի խաղաղութիւն յորդորեն : Գուրսը եղող Եպիսկոպոսներէն , ոմանք առ երկիւղի և ոմանք առ մարդկային ակնածութեան խոր լուծիւն պահելու կը պարտաւորին , և ոմանք Գեր . Հասունէն շահուելով՝ անոր կողմնակից կը հանդիսանան :

Արդ՝ Հասուն Գերապայծառին ընտրութենէն ինչուան այս օրս չորս միջոց ժամանակի կը գտնուի :

Առջի միջոցը ընտրութենէն ինչուան Պալիոնի ընդունելութեան ժամանակն է : Երկրորդը՝ Պալիոնի ընդունելութենէն ինչուան Առաքելեանին տեղապահ խաւրուիլը :

Երրորդը՝ Առաքելեանին տեղապահ նստելէն , ինչուան անիրաւ բանադրանաց միջոցը :

Չորրորդը՝ բանադրանաց օրէն ինչուան առաջիկայ հրատարակութիւնն : Առջի միջոցին մէջ ընտրութեան պայմանը պահելու խոստմամբ կը խաբէ Գեր . Հասունը եթէ ընտրող Եպիսկոպոսները և եթէ ժողովուրդը :

Երկրորդին մէջ ընտրութեան պայմանին հակառակ՝ Բէվէրսուրուսին դրութիւնը մերժելու՝ ժողովրդեան ընդդիմութիւնը բաւական և շատ է ըսելով և կերպ կերպ յուսադրական միջոցներով , Եպիսկոպոսները առ ժամանակ մի կը լռեցնէ . իսկ Պէրաթով ու ժովլալէն և բաւական կողմնակցութիւն ստանալէն ետքը , իր խորհուրդը համարձակ կը յայտնէ , հանդերձ այսու ժողովուրդը անոր նորահնար պատրիարքութեանը գէմ պէտք եղած բողոքները և տրամադրութիւնները կը գործադրէ :

Երրորդին մէջ՝ Հասուն Գերապայծառը ամեն միջոց և յայտնի բռնութիւն կը գործածէ թէ ՚ի Հռովմ , յաւետ արիասիրտ Եպիսկոպոսաց վրայ , և թէ ՚ի կոստանդնուպոլիս Գղերին և ժողովրդեան վրայ , ՚ի վերայ այսր ամենայնի ամենէն ալ առ հասարակ արիութեամբ կը մերժուի այլեւայլ եղանակաւ :

Չորրորդին մէջ՝ իր նորահնար պատրիարքութիւնը իբր կիւլիկիոյ Աթոռոյն իսկական յաջորդութեանը մէջ մտած ընդունել տալու համար , ընդդէմ ամենայն օրինաց և կանոնաց եկեղեցւոյ՝ երկնաւոր և սրբազան իրերը չարաչար կը գործածէ , որ է սրբապղծութիւն , որով թէեւ մեծամեծ աղետից և անթիւ գայթակղութեանց պատճառ կ'ըլլայ , բայց տակաւին ինքը կիւլիկիոյ պատրիարք ոչ երբէք կ'ընդունուի :

Աս ամենքը դիտնալով և տեսնալով մենք՝ կիւլիկիոյ կաթողիկոսութեան Արքեպիսկոպոսունքս վրայ կը բերենք եթէ իրաց վիճակը կը մնայ՝ ինչպէս որ էր Եպիսկոպոսաց Սիւնհոգոսական թղթոյն ժամանակը՝ որ գրեցաւ ՚ի 1866 Սեպտեմբեր 15 . Որովհետեւ Քրիստոսի եկեղեցւոյն մէջ մէկը չկրնար անոր հիմերը խախտել , և ապօրինաւոր մուտ ունեցողը օրինաւորապէս յաջորդեցնել : « Հեռու ըլլայ ինձմէ , կ'ըսէր Մեծն Գրիգոր , որ խախտեմ որ և է եկեղեցեաց մէջ իմ պաշտօնակցացս վրայօք նախնեաց սահմանադրութիւնները , որովհետեւ ինձի անիրաււած կ'ըլլամ , եթէ իմ Եպիսկոպոսներս ինչպէս ՚ի ՚ի : Եւ եթէ որ և իցէ նախնեաց սահմանադրութիւնը խախտելը անիրաւութիւն կը համարի Մեծն Գրիգոր , Բէվէրսուրուսին ըրածը ինչ արդեօք պիտի համարէր , որն որ այնպիսի սահմանադրութեան մը կը հակառակի , որ նոյն իսկ մեր Հայաստանեայց եկեղեցւոյն դասապետական կազմութիւնը վեր ՚ի վայր կը շրջէ , այն կազմութիւնը՝ որ առաքելական աւանդութեամբ եկեղեցւոյն յատկացած է , հռչակաւ միշտ ճանչցուած , ժողովոց կանոններովը և Փրորենտիոյ դաշանց գիրովը վաւերացած : Ուստի կ'ըսենք .

Ա. Նկատելով Գ. Հասունին կաթողիկոսական Աթոռոյն գէմ բռնած ընթացքը ՚ի կենդանութեան Պետրոս Բ. կաթողիկոսի .

Բ. Նկատելով անոր ընտրութեանը համար եղած բարոյական բռնութեանց համընթացութիւնը .

Գ. Նկատելով ընտրող Եպիսկոպոսաց Նախագահ Գեր . Հասունը ընտրած ժամանակնին դիտած վախճաննին , և պայմանաւոր ընտրութիւննին .

Դ. Նկատելով Հասուն Գերապայծառին այլեւայլ ժամանակի մէջ Եպիսկոպոսաց և զանազան անձանց առջեւ ընտրութեան պայմանը պահելու համար տուած խոստմունքները .

Ե. Նկատելով նոյն պայմանին հակառակ և կիւլիկիոյ կաթողիկոսութեան օրինաւոր յաջորդութեանը դէմընդդէմ՝ Բէվէրսուրուս կոնգրակը հնարել տալը և Պէրաթ ընդունիլը .

Զ. Նկատելով Ազգին ՚ի սկզբանէ անտի նորակերպ կաթողիկոսութեան գէմ և Գ. Հասունին ընթացքին վրայօք դժկամակութիւնները , գանգատները և բողոքները :

Է. Մկատելով Հասուն Գերապայծառին երբեմն յայտնի և երբեմն գաղտնի հնարքներով Բէվէրսուրուսի գրութիւնը մեր կիւլիկիոյ Աթոռին Եպիսկոպոսացը կերպով մը ընդունել տալու համար՝ բարոյական և նիւթական ստիպմունքները և հարկադրող ընթացքը .

Ը. Մկատելով Հասուն Գերապայծառին իր ընտրութեան հաստատութեանը համար Եպիսկոպոսներէն գաղտագողի յայտարարութիւն մը կորզելու հնարքները .

Թ. Մկատելով Եպիսկոպոսաց՝ Քահանայից և Ժողովրդեան ՚ի Հռովմ գիմելն նին և Հասուն Գերապայծառին Բրորականտայի պաշտօնատեարց աշակցութեամբը անոնց օրինաւոր ընթացքը արգիլելը , և գիմններուն դէմ յաւէտ ՚ի վրէժխնդրութիւն գրգռուելը .

Ճ. Մկատելով այս գրգռութեան համաձայն Հասուն Գերապայծառին ՚ի Հռովմ Բրորականտայի աշակցութեամբը , և ՚ի կ. Պօլիս Առաքելեանին ձեռօքը ըրած յայտնի բռնութիւնները .

ՃԱ. Մկատելով Առաքելեանին գալստենէն յետոյ՝ ազգին բռնած որոշիչ գիրքը և Տերութեան ընթացքը .

ՃԲ. Մկատելով Ազգային Եպիսկոպոսաց ոմանց ազատութեանը դէմ ՚ի գործ գրուած միջոցները .

ՃԳ. Մկատելով Քահանայից համար եղած յանիրաւի արգելմունքը .

ՃԴ. Մկատելով Օսմանեան Արեւելեան Տերութիւնը՝ Արեւմտեան Պատրիարքութեան մէջ եղող Տերութեանց հաւասարցնելու համար գործադրուած թելագրութիւնները .

ՃԵ. Մկատելով Տերութեան արգար վճիռը անդօր ընելու համար հնարուած անհիմն բանադրանքը , և անոր յանիրաւի գործադրութիւնը .

ՃԶ. Մկատելով Եկեղեցական կանոնաց այսպիսի անիրաւ բանադրանաց պատճառ և հեղինակ եղողները՝ որ աստիճան եկեղեցական պատժոց ներքեւ ձգած ըլլալնին .

ՃԷ. Մկատելով անհիմն բանադրանքէն առաջ եկած Ազգային բաժանմունքը .

ՃԸ. Մկատելով այսպիսի ծանր պարագայից մէջ միւս Եպիսկոպոսաց բռնած մեղադրելի ընթացքը .

ՃԹ. Մկատելով Բէվէրսուրուսին և Հասուն Գերապայծառին Պատրիարքութեան նկատմամբ Տերութեան որոշողութիւնը .

Ի Մկատելով հասարակ ճամբով և սովորութեամբ գործադրելի եղած միջոցներուն փորձուիլը և ապարդիւն մնալը .

ԻԱ. Մկատելով Գեր . Հասունին նորէն իշխանութիւն վարելու բարոյական անհնարութիւնը և նիւթական անկարողութիւնը .

ԻԲ. Մկատելով Հայ Բեղաւորու եկեղեցւոյն ներքոյ գտնուած արտաքոյ կարգի գիրքը և վերջին կարօտութիւնը՝ զմեզ արտաքոյ կարգի և որոշիչ գործադրութեան մը ստիպելը .

ԻԳ. Մկատելով վերջապէս ամեն նկատելի բաները՝ կ'ըսենք և կը յայտարարենք, եթէ

1. Հասուն Գերապայծառին ընտրութիւնը բոլորովին ազատ ընտրութիւն չըլլալէն ՚ի դատ , միանգամայն պայմանաւոր էր :

2. Հասուն Գերապայծառը գրուած պայմանը առ երեսս ընդունեց և պահել խոստացաւ . բայց գործով ոչ միայն չպահեց , այլ եւ ամենայն միջոց ՚ի գործ գրաւ նոյն պայմանը աւերելու : Որ է յայտնապէս ըսել , թէ եղաւ ընտրող Եպիսկոպոսաց կողմանէ տուչութիւն էրասնց և արքանսնց , բայց չեղաւ Ընտրելոյն կողմանէ ընդունելութիւն նոյն էրասնց և արքանսնց , որով գործը թերակատար մնաց , և իր պայմանական և վախճանական ամբողջութիւնը և լրումն չունեցաւ :

3. Եւ այսպէս Հասուն Գերապայծառը անուամբ միայն կիւլիկիոյ Աթոռոյն յաջորդութեանը հասաւ , և ոչ իրօք :

4. Մանաւանդ թէ կիւլիկիոյ Պատրիարքի տիտղոսիւ նոր Պատրիարքութեան մը մէջ հաստատուիլ ուզելն իսկ թէ նիւթական և թէ հոգեւոր բռնութիւններու կարօտացաւ , եւս և Եպիսկոպոսաց վրայ , և երբէք ընդունելութիւն չգտաւ , և խաղաղական ստացութեան ոչ երբէք մտաւ :

5. Ուրեմն կ'ըսենք , Գեր . Հասունին կիւլիկիոյ Պատրիարքութիւնը ոչ միայն իր Արքունական Պէրթիւն ետ առնուելովը և քաղաքականօրէն , հապա նոյն իսկ հոգեւորապէս ոչինչ է :

6. Ուստի մենք Արքեպիսկոպոսունքս՝ պատասխանատուութիւնը ըստ ամենայն մասին Բրորականտայի Պաշտօնատեարց վրայ ձգելով , զետեղել ո՛ր և կամին այս նորաձեւ Պատրիարք Գ. Հասունը , կը յայտնենք՝ թէ մեր կիւլիկիոյ Պատրիարքական Աթոռը դեռ իր օրինաւոր յաջորդը չունենալով ՚ի պարապութեան է 1866էն ՚ի վեր :

Տուեալ ՚ի Բերա կոստանդնուպօլսոյ , ՚ի դուռն Ս. Յովհաննու Ոսկեբերանի ՚ի 2 Փետրվարի 1871.

ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՊՃԵԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԱՍԻՈՅ
ՅԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱԶՏԻԱՐԵԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏԻ
ԲԱՐՍԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻՊՐՈՍԻ
ՍՈՒՔԻԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԶԱՆՃԵԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆՏԻՈՒԲԱՅ

28200-62



ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅՔ

ՈՂՈՐԾՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱԹՈՌՈՑՆ ԿԻՒԻԿԻՈՑ

ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՂԱՃԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԱՍԻՈՅ

ԲԱՐՍԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻՊՐՈՍԻ

ՍՈՒԲԻԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԶԱՆՃԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆՏԻՈՔՍՅ

Առ Յարգոյ Գղեր և հաւատացեալ ժողովուրդ Կաթո-
ղիկէ Հայոց .

ԿԻՒԻԿԻՈՑ Կաթողիկոսական Աթոռը՝ բարեյիշատակ Պետրոսի Ը մահուամբը
այրիանալէն ետքը, շատ մը անցքեր պատահեր, և վերջապէս Աթոռոյն Եպիս-
կոպոսաց ընտրութեամբը, ինչպէս որ ամենուն յայտնի է, կոստանդնուպոլսոյ Նախա-
գահը Գեր. Հասուն յաջորդութեան կոչուեր էր, որով և երկուց Աթոռոց բաժա-
նումը վերնալով, ՚ի մի Աթոռ Կաթողիկոսական ձուլուեր էր ազգային իրաւա-
բանութիւնը, ինչպէս որ ազգային Կաթողիկոսութեան յատկութիւնն էր և գոր-
ծածութիւն :

Այլ աւանդ, զի այդ բաղձալի և ամենեցուն հաճելի միութիւնը իւր հետը
բերաւ չար եւս բաժանում մը :

Արդէն ՚ի 24 Սեպտեմբերի 1870 Ձեզի հետ վշտակից եղած ատեննիս, ո՛հ հա-
ւատացեալ ժողովուրդ, միանգամայն յիշեցուցեր էինք ձեզի, եթէ «Այսպիսի
» գիպուածներ ուրիշ ատեններ ալ տեղի ունեցած են Եկեղեցւոյ մէջ» ուստի և
կ'ըսէինք թէ, « Ինչ որ մեզմէ առջինները գործած են աս եղանակ պատահարաց
» մէջ, նոյնը ընել չենք գանդալիր և մենք » :

Առուրբ յառաջ լսեցիք եթէ ինչպէս Կաթողիկոսութեան ընտրուած և Աղ-
զին կենդրոն միութեան ըլլալու անձը՝ օտարոտի շաւիղ ընթացաւ, և յաջորդու-

թենէն խոտորեցաւ, մաս մը իր հետը տանելով եթէ ժողովուրդեան, և եթէ մեր Ա-
թոռոյն իրաւաժառանգ Եպիսկոպոսներէն, որ Եպիսկոպոսաց համար լալով կ'ըսենք,
եթէ երդմամբ պարտաւորեալ էին Աթոռոյն իրաւանցը պաշտպան ըլլալու, որով
և իրենց ընտրողական իրաւանց աղբիւրը չխցանելու, որ է հաւատարմութիւն երդ-
ման, և հաւասարելու այն Եպիսկոպոսաց՝ որոնք Աթոռոյն դեռ հաւատարմութեան
երդումն ըրած չըլլալուն համար, ո՛չ Աթոռոյն Եպիսկոպոսներն կը համարուին և
ոչ անոր իրաւունքը կը ժառանգեն :

Մենք այսպիսեաց համար Աստուծոյ գթութիւնը մաղթելէն յետոյ, մեր ի-
րաւանց և իշխանութեան զօրութեամբը ընդ գահերէցութեամբ Գալըպճեան Իգ-
նատիոս Արքեպիսկոպոսին Ամասիոյ, որն որ ՚ի մէջ Կաթողիկոսական Աթոռոյն Ար-
քեպիսկոպոսաց աւագադոյնն է, գումարել որոշեցաք յանուն Տեառն առ ՚ի ընտ-
րել մեզ հովիւ ոք արժանաւոր յաջորդել Տեառն կամօք զԱթոռ Հայրապետու-
թեան Կիւլիկիոյ : Եւ որովհետեւ ընտրութեանց մէջ հինաւանդ սովորութեանց
համաձայն Եպիսկոպոսաց հետ Գղերն իսկ և ժողովուրդն մասնակցութիւն կ'ունե-
նան, ըստ այսմ և մեք կատարել որոշեցաք, և ինչուան մեզի հասած աւանդու-
թիւնը յարգելով, որպիսի և մեր նախնիքը յարգած են, որոշեցաք միանգամայն՝
որ ընտրեալը անմիջական և լիուրի իշխանութեան յաջորդէ, պահելով ա-
թիւն և զմիութիւն ընդ Գլխոյն Եկեղեցւոյ, որուն նշանն է հի-
թուղթը՝ որ է հաւատոյ դաւանութիւն :

Ըստ այսմ ուրեմն, ո՛ Յարգոյ Գղեր և Պատուական ժո-
ղնտրելեաց առաջարկութիւնը ընդունելով, և Գղերէն երկ
ունենալով՝ որոնց մէկը մեր ընտրութեամբ, և միւսն ս
անոնց երեսփոխանութիւնը կը կրէ, ժողովեցաք այսօր,
նու Ոսկերբերանի, և յետ սրբոյ Պատարագին, ու մեր
Հոգին ձշմարտութեան առ ՚ի ունել զլուսաւոր միտ-
հրատարակեցաք և հրատարակեմք զԳերերջանիկ Պ
պիսկոպոս Տիգրանակերտի ՚ի Կաթողիկոսութիւն
Պատրիարքութիւն Կիւլիկիոյ, ՚ի յաջորդութիւն |
ուանձնաշնորհութեանց նոյն Աթոռոյ : Նորոգ ըն-
որուն Աստուած երկայն աւուրս շնորհէ ուղիղ
՚ի միութեան լինել ընդ սրբոյ Աթոռոյն Հռովմ
Սուրբ Եկեղեցւոյ :

Եւ արդ, Յարգոյ Գղեր և Պատուական
Հայոց, ահա ձեզ և մեզ Հովիւ ընտրեալ, այ
դել ունի ամենուն ՚ի կամս Աստուծոյ և յօր
մեր Հովուին ձայնը և լսենք անոր և հե
թիւնը մատուցանելով, և միաբերան մա-
ղիկէ Եկեղեցւոյ, սէր և շինութիւն հ

Քահանայապետին մերոյ Պիոսի Թ. յաղթութիւն և զօրութիւն Թագաւորին մերոյ Պերճապետակ Սպարապետ Ազիզ Խանի, և բարեզարդութիւն Հայրապետութեանս և խաղաղութիւն Ազգիս, աղօթիւք և բարեխօսութեամբ Սրբոյ Հօրս մերոյ Գրիգորի Լուսաւորչի, և երիցս երանելի և տիեզերահռչակ Հայրապետին Յովհաննու Ոսկերերանի, որուն տաճարին մէջ և նշխարացը հովանաւորութեան տակ շնորհեց մեզ Աստուած Եկեղեցւոյն մերոյ վայելչութեան պսակը, և նմա փառք յաւիտեանս ամէն :

Ի կոստանդնուպօլիս, յեկեղեցւոյ Սրբոյն Յովհաննու Ոսկերերանի, 'ի
Քետրուարի 1871.

ԻԳՆԱՏԻՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍՄԱՍԻՈՅ
ԲԱՐՍԵՂ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻՊՐՈՍԻ
ՍՈՒՔԻԱՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆՏԻՈՒՔԱՅ

թիվ 104

«Ազգային գրադարան»

NL0108478

